# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԻԹՈՎ

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ դեկտեմբերի 5-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, հավարտ որի կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում տեղի ունեցած ոճրագործության ժամանակ զոհված պետական այրերի մահվան քառասունքի առիթով:



Մայր Տաճարում հոգեհանգստյան արարողության ընթացքում

«Նրանք մեզ հետ չեն: Նրանք չկան, բայց թողեցին մեզ մի երազ՝ շեն, բարգավաճ, հզոր հայրենիք կերտելու: Նրանք մեզ հետ չեն, բայց



ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒՑ ԱՌԱՋ

**թողեցին պատգամ. մահ իմացյալ՝ անմահություն: Արդ, սիրելի բարեկամներ, եկեք սիրով միաբան, անդավաճան նահատակների հիշատակին, համախմբվենք նրանց թողած երազների ու պատգամների շուրջ՝ կերտելու մեր ժողովրդի երազների հայրենիքը, ապահովելու մեր հայոց երկրին խաղաղ, անվրդով երկինք, երջանիկ ու ապահով կյանք»,-** Ս. Հոգու մխիթարությունը հայցելով զոհվածների ընտանիքներին ու բարեկամներին, ասաց Վեհափառ Հայրապետը:

Օրվա պատարագիչն ու քարոզիչն էր Գերշ. Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետ Արամ Սարգսյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, կառավարության անդամներ, զոհվածների հարազատներ:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*